«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրության դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Գայանե Մելիք-Սարգսյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գյումրու Ակադեմիական վարժարան

## Բովանդակություն

Ներածություն ……3

Գլուխ 1

Նախագծային աշխատանքի մեթոդի կիրառումն

աշխարհագրության դասերին …….. 5

Գլուխ 2

Նորարարական մեթոդների կիրառումը որպես աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության խթանման միջոց աշխարհագրության դասավանդման ընթացքում ……10

Եզրակացություն ……..15

Օգտագործված գրականության ցանկ ……17

# Ներածություն

Աշխարհագրության դասավանդումը, որի բովանդակությունն արտացոլում է աշխարհագրական գիտության հիմունքները, տարբերվում է մյուս առարկաներից բնության, հասարակության, դրանց փոխներգործության ուսումնասիրությանն առավել համալիր մոտեցմամբ: Առարկան ունի էկոլոգիական ուսուցման և դաստիարակության նպատակներին հասնելու զգալի ներուժ դպրոցական ուսուցման բոլոր մակարդակներում:

Գրավելով սահմանային տեղ ուսումնական տարբեր դիսցիպլինների միջև և լինելով միասնացված առարկա՝ աշխարհագրությունն ուսումնասիրում է ինչպես շրջակա միջավայրն ու սոցիումը, այնպես էլ ժողովրդագրությունը, ազգագրությունը, տալիս է տրանսպորտի, զբոսաշրջության, կրոնների, մշակույթի աշխարհագրական պատկերը և շատ այլ ուղղություններ: Աշխարհագրության մեջ դիտարկվում են տարածքների, երկրների ու աշխարհի կայուն զարգացումը, մարդկության համամոլորակային հիմնախնդիրները: Առարկայի դասավանդման գործում զգալի դեր է հատկացվում դասավնդման մեթոդներին՝ որպես սովորողների մոտ աշխարհի ու նրանում ընթացող գործընթացների մասին ամբողջական պատկերացում ձևավորող առարկայի: Ուսոցման ժամանակակից մեթոդները պետք է նպաստեն ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության և մոտիվացման բարձրացմանը: Այսօր պետք չէ հաղորդել պատրաստի գիտելիքներ, այլ դրանք պետք է ձեռք բերվեն սովորողների և դասավանդողների համատեղ գործունեությամբ:

Դասավանդող ուսուցչի կողմից ցանկացած նոր տեխնոլոգիայի յուրացումն ու կիրառումը սկիզբ է դնում ուսուցչի նոր մանկավարժական մտածողությանը, նրա աշխատանքի մեջ մտցնում է հստակություն, մեթոդական լեզվի պարզություն: Մանկավարժական նոր, կամ ավելի ճիշտ կլինի ասել, թարմացված տեխնոլոգիաներ կիրառելով՝ համոզվեցի, որ աշխարհագրության ուսուցման գործընթացը կարելի է դիտարկել նոր տեսանկյունից՝ անձի և անհատի ձևավորման տեսանկյունից, հասնել որակապես ավելի լավ արդյունքների:

**Նպատակները**

1. Սովորողների կողմից աշխարհագրական գիտելիքների կիրառման ուսումնասիրությունը նախագծային աշխատանքի կատարման ընթացքում
2. Նորարարական մեթոդների արդյունավետության ուսումնասիրությունը աշխարհագրության դասավանդման գործընթացում
3. Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման արդյունավետության ուսումնասիրությունն աշխարհագրության դասավանդման ընթացքում:

**Խնդիրները**

1. Բացահայտել նախագծային աշխատանքի, որպես ուսուցման ժամանակակից մեթոդի, էությունը:

2. Բացահայտել նախագծի վրա աշխատելու համար սովորողների համատեղ գործունեության մոտիվացման ուղիների ձևավորումն ուսուցչի կողմից:

3. Դիտարկել նախագծային մեթոդի կիրառման հնարավոր ուղիներն աշխարհագրության դասերին:

4. Բացահայտել սովորողների ակտիվությունն աշխարհագրության դասերին նորարարական մեթոդների կիրառման արդյունքում:

**Արդիականությունը**

Աշխատանքն արդիական է, քանի որ այսօր դպրոցի առաջ ծառացած կարևորագույն խնդիրներից մեկն է դաստիարակել որոշակի գիտելիքների պաշարով զինված քաղաքացու, որը լինի ոչ միայն կատարող, այլև որոշումներ կայացնող, նախաձեռնող անհատ և անհատականություն, դառնա հասարակության լիիրավ և լիարժեք անդամ՝ ոչ թե սպառողի, այլ մտածողի, վերլուծողի, հետազոտողի, ստեղծագործողի, արարողի կարողությամբ և հոգեբանությամբ:

# Գլուխ 1

# Նախագծային աշխատանքի մեթոդի կիրառումն աշխարհագրության դասերին

Կարծում եմ, առանց Երկրի, բնության և հասարակության կազմակերպման մասին գիտելիքների, անձը չի կայանա: Սա անհերքելի փ;աստ է: Աշխարհագրությունը ծնում է միտք, հարստացնում է մարդու ներաշխարհը:

Աշխարհագրության դասերին կարելի է մեծացնել յուրաքանչյուր աշակերտի ինքնուրույնությունը, նրան հնարավորություն տալ ինքնուրույն որոշել ճշմարտության որոնման կամ որոնումների արդյունքներին հասնելու ուղիները, միջոցները, կատարել հետազոտական, ստեղծագործական աշխատանք:

Հետազոտական ստեղծագործական աշխատանքի հնարավորություն է տալիս նախագծային աշխատանքի մեթոդը: Վերջինս կարելի է դասել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաների թվին, որոնք նպաստում են աշակերտի ինքնազարգացմանը և ինքնակայացմանը:

Մանկավարժական պրակտիկայում, ներդնելով նախագծային գործունեության տեխնոլոգիան, պետք է ուշադրություն դարձնել աշակերտի անհատականության բազմակողմանի զարգացմանը և հետևել որոշակի նպատակների. տաղանդավոր սովորողների բացահայտմանը, ուսումնական գործընթացի ակտիվացմանը, սովորողների մոտ գիտական աշխատանքի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, հրապարակային ելույթների հմտության ձևավորմանը, ավագ դասարանների սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, գիտական և մեթոդական աշխատանքի մակարդակի բարձրացմանը: Սովորողները սովորում են բանավեճ ծավալել, պաշտպանել իրենց աշխատանքը, ներկայացնել դրա ուժեղ կողմերը, պաշտպանել իրենց տեսակետը, լսել այլոց կարծիքները: Նախագծային աշխատանքի արդյունքները ներկայացվում են պրեզենտացիաների, զեկուցումների, ռեֆերատների, պլակատների և այլ ձևերով:

Նախագծային աշխատանքը կարող է լինել ոչ միայն անհատական, այլ նաև կոլեկտիվ ստեղծագործական աշխատանք, որը դաստիարակում է համագործակցային

կարողություններ, հանդուրժողականություն, նպաստում սովորողների ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը, մղում աշակերտներին կայացնելու ինքնուրույն որոշումներ, աշակերտների մոտ ձևավորում է կազմակերպական ունակություններ: Աշխատանքի ընթացքում աշակերտն զգում և գիտակցում է իր անհատական դերն ընդհանուր գործում, սովորում է սովորել, ձեռք է բերում նոր գիտելիքներ և դրանց կիրառման փորձ: Նախագծային աշխատանքի կատարման ընթացքում աշակերտը սովորում է ճիշտ օգտագործել տեղեկատվության առկա և, շնորհիվ համացանցի ռեսուրսների՝ հեռավար, զանազան աղբյուրներ, սկսում է տիրապետել տեղեկատվական և դիստանցիոն տեխնոլոգիաների, ինչպես նաև համակարգչի մուլտիմեդիա հնարավորությունների: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ոչ միայն միասնացնել արդեն առկա փաստացի գիտելիքները, այլ կիրառել դրանք և ինքնուրույն, կազմակերպված հետազոտական աշխատանքով արդեն ինքնակամ և ոչ թե պարտադրված ձևով ձեռք բերել նոր գիտելիքներ: Հենց այս կարողություններն են, որ դեռ բացակայում են շատերի մոտ:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում ես դիմել եմ այս մեթոդին ոչ թե որպես նախագծային աշխատանքի մեթոդի, այլ որպես ինքնուրույն կամ գործնական աշխատանքի կատարման միջոցի: Մեթոդը կիրառել եմ հատկապես ռեգիոնալ աշխարհագրության, Հայաստանի աշխարհագրության և ընդհանուր աշխարհագրության դասընթացների դասավանդման ընթացքում 8-10-րդ դասարանների աշակերտների հետ: Ըստ իս այս մեթոդի կիրառումն աշակերտին սովորեցնում է, որ կյանքում և ուսման մեջ ցանկացած գործողություն, ցանկացած գործընթաց պետք է լինի նպատակային, պետք է հետապնդի որոշակի նպատակ և տա արդյունք: Նախագծային աշխատանքի կիրառումը նաև սովորեցնում է աշակերտին մենակ կամ իր ընկերների հետ համագործակցության ընթացքում վերջնական նպատակին հասնելու համար ընտրել ուղիներ, տարբերակել դրանցից արդյունավետ ուղիները: Աշակերտը սովորում է ինքնուրույն աշխատել և բոլորովին կարևոր չէ անհատական ձևով, թե խմբի մեջ: Նախագծային աշխատանքը մի հետաքրքիր գործընթաց է , որը սովորողին հնարավորություն է տալիս անհատական ձևով կամ խմբի մեջ դրսևորել իրեն, փորձել իր ուժերը, օգտագործել գիտելիքները: Նա հասկանում է, որ սովորելու գործընթացն ինքնանպատակ չէ, որ ուսումնառության

ընթացքում տարբեր առարկաներից իր ձեռք բերած ինֆորմացիան իր հիշողության մեջ ոչ թե աննպատակ է կուտակվել, այլ կիրառելի է որոշակի խնդիրների լուծման ժամանակ: Նախագծի իրականացումը սովորեցնում է սովորողին կառուցել հիմնախնդիր, սովորել և լուծել այն: Այս աշխատանքի արդյունքը հիմնախնդրի լուծման գործնական միջոցը, ուղին գտնելն է, որը խիստ անհատական է:

Ուսոցչի համար նախագծային աշխատանքի կիրառումը մի գործընթաց է, որն ակնհայտորեն ինտեգրում է, միասնացնում է ուսուցումն ու ուսուցանումը: Այն աշխատանքի կատարման համար անհրաժեշտ որոշակի խնդիրների առաջադրման, նպատակադրման, աշխատանքի պլանավորման, ինֆորմացիայի որոնման և ակադեմիական գիտելիքների կիրառման, ինքնուսուցման, ինքնավերլուծության և ինքնագնահատման կարողությունների ու հմտությունների զարգացման և դաստիարակության պրոցես է: Նախագծի իրականացման բոլոր փուլերում (նախապատրաստական, պլանավորման, հետազոտական, եզրահանգումների կատարման, ներկայացման) ուսուցիչը ոչ թե լուծումներ է առաջադրում, այլ հանդես է գալիս որպես խորհրդատու, ուղղորդող, հսկող, գնահատող:

Նախագիծն անպայման պետք է ունենա իրական մատչելի նպատակ, որը պետք է լինի ելակետային խնդրի լուծումը, որոշակի հստակ արդյունքի ստացումը: Անորոշ նպատակադրումը վերջնական արդյունքում կարող է աշակերտին հիասթափեցնել: Թեմայի ընտրությունը պետք է հիմնված լինի ուսումնական նյութի խորացված ուսումնասիրության վրա: Հանձնարարությունը պետք է համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին, զարգացման մակարդակին: Ուսուցիչը պետք է ոչ թե պարտադրի աշակերտներին այս կամ այն թեման և ինֆորմացիան, այլ կարողանա մոտիվացնել և ուղղորդել:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում 8-10-րդ դասարաններում կատարել ենք հիմնականում խաղային, հետազոտական և ինֆորմացիոն նախագծեր: 8-րդ դասարանում պատի թերթի և համակարգչային պրեզենտացիաների ձևով աշակերտներն իրենց նախասիրություններին ու հետաքրքրություններին համապատասխան ընտրել և ներկայացրել են ուսումնասիրվող երկրներից իրենց հետաքրքրող երկրների աշխարհագրությունը, այնտեղ բնակվող ժողովուրդների մշակութային ժառանգությունը (ազգային տարազը, խոհանոցը, գրականությունը,

ճարտարապետությունը, կերպարվեստը, կիրառական արվեստը, երգարվեստը, պարարվեստը, սպորտային նվաճումները), սովորույթներն ու ծեսերը, այդ երկրների տնտեսական զարգացման անցյալը, ներկան և հեռանկարները: Պրեզենտացիաները ներառել են տարբեր ձայնային, ֆոտո և տեսանյութեր, որն ավելի է աշխուժացրել աշխատանքի արդյունքի ցուցադրումը: Հետազոտական և խաղային նախագծեր իրականացվել են 9-րդ դասարանում Հայաստանի մարզերի ուսումնասիրության ժամանակ: Հատկապես հետաքրքիր ձևով ներկայացվեցին Շիրակի մարզի հեռանկարային զարգացման հնարավորությունները: Աշակերտները հաճախ զարմանալի խորաթափանցությամբ բացահայտում են այնպիսի նրբություններ և հնարավորություններ, որոնք կարող են մեր աչքից վրիպել: 1990-ական թվականներին, երբ 9-րդ դասարանում ուսումնասիրվում էր բնօգտագործման և բնապահպանության դասընթացը, «Աշխարհի անտառային ռեսուրսների պահպանությունը» թեման ֆիզմաթ հոսքի 9-րդ դասարանում հանգամանորեն ուսումնասիրվեց և ներկայացվեց գործնական աշխատանքի ձևով, որն այսօր ես կարող էի անվանել խաղային նախագիծ: Ներկայացման ընթացքում որպես դիդակտիկ նյութ աշակերտներն օգտագործեցին իրենց հավաքած և նախապատրաստած բուսատեսակների նմուշները: Ֆիզմաթ հոսքի 10-րդ դասարանում ժամանակի սղության պատճառով ընդհանուր աշխարհագրության դասընթացից «Աշխարհագրական թաղանթի հատկանիշները» թեման մի քանի տարի շարունակ նախընտրեցինք ներկայացնել ինֆորմացիոն և ստեղծագործական նախագծերի տեսքով, որոնք բավականին արդյունավետ էին: Այդ աշխատանքները կազմակերպվեցին, ուղղորդվեցին և անցկացվեցին խմբային նախագծերի ձևով: Այստեղ շատ կարևոր էր խմբերի ճիշտ ձևավորումը: Աշխատանքին հավասարապես մասնակցեցին նշված դասարանների բոլոր աշակերտները, որոնք շատ տարբեր էին իրենց նախասիրությամբ, հետաքրքրություններով և առաջադիմությամբ: Խմբերն ընտրեցին ղեկավարներ, կատարեցին իրենց անդամների միջև աշխատանքի բաժանում աշակերտների հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան: Աշխատանքները ներկայացվել են տեսաֆիլմերի, ալմանախների տեսքով:

Նման աշխատանքները նպաստում են սովորողների գործունեական, մտածողական, տրամաբանական, վերլուծական, տեղեկատվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը և դրսևորմանը, ակտիվության բարձրացմանը:

Նախագծային աշխատանքի ներկայացման փուլում շատ կարևոր է աշխատանքի արդյունքների գնահատումը: Այս փուլում ուսուցիչը աշակերտների հետ մշակում է նախագծի գնահատման չափանիշները (թեև կարծում եմ գնահատման չափանիշների նախնական մշակումը կարելի է և պետք է կատարել նախապատրաստական փուլում, իսկ ներկայացման փուլում դրանք վերանայել, լրացնել): Գնահատման չափանիշները, որոնք սովորաբար մշակում եմ աշակերտների հետ, ընդգրկում են մասնակիցների ինքնուրույնության մակարդակը, գրառումների, պաստառների ձևավորման որակը, մշակումների ծավալը, ուսումնասիրվող խնդիրների լուծումների քանակը, արդիականությունը, աշխատանքի ներկայացման ընթացքում շարադրվող թեմայի, գաղափարների, պատկերացումների խորության և լայնության ներկայացումը, աշխատանքի արդյունքների շուրջ լսարանի, այդ թվում՝ ուսուցչի հարցերի պատասխանների որակը: Նախագծային աշխատանքի ներկայացման փուլում ուսուցիչը հանդես է գալիս շարքային մասնակցի դերում: Նա լսում է, տալիս է նպատակային հարցեր, անհրաժեշտության դեպքում պետք է ուղղորդի ներկայացնողի կողմից աշխատանքի արդյունքների վերլուծությունը, գնահատում է աշակերտների ջանքերը, կրեատիվությունը, աղբյուրների և ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ուսումնասիրության խորությանը, նախագծի շարունակման ներուժը:

Այսպիսով աշխարհագրության ուսուցման գործընթացում նախագծային աշխատանքի կիրառումը նպաստում է սովորողների կողմից աշխարհագրական մի շարք հմտությունների (ճանաչողական, գործնական, գնահատման) ձեռքբերմանը և տիրապետմանը: Աշխատանքի ընթացքում աշակերտները տիրապետում են համագործակցային կարողություններին, գիտակցում են իրենց անհատի դերը աշխատանքային գործընթացում, սովորում են սովորել, ստանալ նոր գիտելիքներ, ինտեգրել դրանք տարբեր իրավիճակներում ըստ անհրաժեշտության:

## Գլուխ 2

## Նորարարական մեթոդների կիրառումը որպես աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության խթանման միջոց աշխարհագրության դասավանդման ընթացքում

Աշխարհագրության ուսուցչի բազմամյա աշխատանքային փորձն ինձ հանգեցրել է այն եզրակացությանը, որ ուսուցման ընթացքում նոր տեխնոլոգիաների կիրառումը խթանում է աշակերտների հետաքրքրությունը ուսումնասիրվող առարկայի նկատմամբ և մոտիվացնում է նրանց դրա հետագա ուսումնասիրության համար: Դասերի պլանավորման ժամանակ բացի ավանդականից նախատեսում և օգտագործում եմ աշխատանքային տարատեսակ համագործակցային մեթոդներ ու հնարներ: Վերջին տարիներին շատ եմ օգտագործում նորարարական տեխնոլոգիաներ: Սա նպաստում է աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացմանը, խթանում և նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացնում է տարբեր կարողունակություններ, հոգեբանական գործընթացները, նպաստում է մտածողության զարգացմանը, ընկալմանը, մարզում է հիշողությունը: Աշխարհագրության դասերին նորարարական մեթոդների օգտագործումը թույլ է տալիս աշակերտներին վառ, հետաքրքիր ձևով յուրացնել աշխարհագրական տերմիններն ու հասկացությունները, սահմանումները, որոնք ակնառու կերպով ներկայացվում են տեսահոլովակներով ու լուսանկարներով: Ժամանակակից տեխնոլոգիաները նպաստում են ցանկացած թեմայով ուսուցանվող նյութի հստակ ընկալմանը, նյութի ամրապնդմանը խաղային տարբերակով: Ոչ ավանդական դասը ինքնատիպ դաս է, որի ընթացքում ուսուցիչը թեմային առնչվող նորույթները ստեղծագործաբար ներառում է դասի նպատակի, բովանդակության, մեթոդների, դասի կազմակերպման ձևի մեջ:

Ցավոք այսօր աշխարհագրությունը կարելի է դասել պահանջարկ չունեցող առարկաների թվին: Չնայած դրան բոլոր սովորողները պետք է տիրապետեն որոշակի

գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ունենան կամ ձևավորեն հստակ դիրքորոշում:

Ինչպե՞ս գտնել, ընտրել այն, ինչը կօգնի ուսուցման գործընթացը դարձնել հետաքրքիր, ստեղծագործական, հիշվող: Դժվար է այս հարցին պատասխանել: Ժամանակակից մանկավարժությունը հագեցած է դասավանդման զանազան ձևերով ու մեթոդներով, բայց մի բան անփոփոխ է մնում. Էական է մնում դասի դերը: Դրա տևողությունը համեմատաբար կարճ է, բայց յուրաքանչյուր րոպեն աշակերտների մոտ կարող է ծնել սովորելու ցանկություն, գիտելիքի, կարողության ծարավ, կամ, ընդհակառակը, ծնել ձանձրույթ և անգործություն: Այս րոպեների, ժամերի, օրերի, տարիների արժեքն ու նշանակությունը աշակերտի կյանքում ու ճակատագրում որոշում է ուսուցչի կարգավիճակը:

Դասի ընթացքում տեղի է ունենում ուսուցչի և աշակերտների կոնտակտը, որը և կանխորոշում է դասի արդյունավետությունը և պայմանավորված է ուսուցչի մանկավարժական վարպետությամբ: Հենց դասն է հանդիսանում յուրաքանչյուր ուսուցչի այցեքարտը: Աշխատում եմ համոզել աշակերտներիս, որ դպրոցում ուսումնասիրվող բոլոր հանրակրթական առարկաները փոխադարձաբար կապված են, որ յորաքանչյուր առարկա իր հերթին նպաստում է մյուսների յուրացմանը և ուսումնառության գործընթացն ամբողջապես նպաստում է նրանց աշխարհայացքի, անհատականության ձևավորմանը, քաղաքացու կայացմանը, և, որ <<հղկված քարը>> երբեք աննկատ չի մնա:

Իմ պրակտիկայում օգտագործում եմ ոչ ստանդարտ դասերի մի քանի տիպ, որոնք այս կամ այն չափով ազդում են սովորողների ճանաչողական ակտիվության, գիտելիքների, հմտությունների, կարողությունների որակի, վերաբերմունքի վրա: Նման դասերից են. <<մոդուլային ուսուցման տեխնոլոգիան>>, <<նախագծերի մեթոդը>>, <<բանավեճի մեթոդը>>, <<ասուլիսի մեթոդը>>, <<կեյս-մեթոդը>>, <<ասոցեացիաների (զուգորդությունների) մեթոդը>> և այլն: Առանձին տեղ ունեն գործարար և դերային խաղերը: Հետաքրքիր անցան 8-րդ դասարանում դերային խաղ - դասերը. <<Երկրներով և տարածաշրջաններով>>: Յուրաքանչյուր խումբ որևէ երկրի վերաբերյալ պատրաստում է հանձնարարություն – նախագիծ: Դասի ընթացքում <<նախագահները>> և <<վարչապետները>> պատմեցին երկրի բնության,

բնակչության, տնտեսության, տեսարժան վայրերի մասին: Սովորողներին առաջադրանքը հրապուրեց և ոգևորեց: Նրանք ներկայացրեցին ազգային տարազները, ազգային մշակույթը, նվագեցին, կատարեցին ազգային երգեր և պարեր, որքան կարողացան, անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով և գերմաներենով ներկայացրին հայտնի պոետների ստեղծագործություններ, ներկայացրին ճապոնական թեյախմության արարողությունը, իկեբանայի արվեստը: Պատրաստել էին պրեզենտացիա երկրների ազգային խոհանոցների, էկզոտիկ ուտեստների վերաբերյալ: Նման ձևով արդյունավետ է անցկացնել ուսումնասիրվող տարածաշրջանների ամփոփիչ դասերը: Սովորաբար նման դասերը դառնում են անմոռանալի և սովորողների մոտ զարգացնում են և՛ լեզվական գրագիտության, և՛ սովորել սովորելու, և՛ ինքնաճանաչողական ու սոցիալական, և՛ ժողովրդավարական ու քաղաքացիական, և՛ թվային ու մեդիա, իհարկե նաև մշակութային կարողունակությունները:

Ինչպես գիտենք, աշխարհագրական գիտությունն ինքը ծնվել է ճանապարհորդությունների արդյունքում: Այդ պատճառով էլ շատ հաճախ նախապատվությունը տալիս եմ դաս – ճանապարհորդություններին: Շատ հաճախ հատկապես 6-9-րդ դասարաններում աշակերտները կատարում են ոչ երկար ճանապարհորդություններ նախընտրած միջօրեականով կամ զուգահեռականով, մայրցամաքներով, տարածաշրջաններով, երկրներով, հայրենի բնաշխարհով, Հայաստանի մարզերով:

«Բանավեճի» մեթոդով շատ հետաքրքիր անցավ 11-րդ դասարանում «Բուսական ռեսուրսների օգտագործումը, պահպանումը և վերականգնումը» թեմայի ուսումնասիրությունը: Աշակերտները նախապես պատրաստվել էին, հավաքել անհրաժեշտ տվյալներ, թարմացրել դասագրքի տվյալները: Հնչեցվեց հանգուցային հարցը՝ «Որքանով է բնակչությունն ապահովված բուսական ռեսուրսներով, և հասարակության արտադրական գործունեությունը սպառնում է արդյոք աշխարհի բուսական ռեսուրսների գոյությանը, թե ոչ»: Դասարանը բաժանվեց երկու խմբի՝ կողմ և դեմ: Ծավալվեց բանավեճը: Երկու կողմի դիրքորոշումը խիստ հիմնավորված էր համապատասխան փաստարկներով: Ոչ ոք դասապրոցեսից դուրս չմնաց: Բոլորն ակտիվորեն և ոգևորված մասնակցում էին նշված հարցի քննարկմանը: Նկարագրված

դասը նպաստեց աշակերտների մոտ սովորել սովորելու, լեզվական գրագիտության, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունների զարգացմանը, նրանց էկոլոգիական դաստիարակությանը:

Այսօր դասը հնարավոր է շատ ավելի արդյունավետ կազմակերպել, եթե ուսուցիչը տիրապետում է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներին: Շատ հաճախ նման դեպքերում օգնում է ուսուցիչ – աշակերտ համագործակցությունը, որտեղ երբեմն դասի կազմակերպման գործընթացում արդյունավետորեն փոխվում են ուսուցչի և աշակերտի դերերը: Համավարակի պատճառով դասերի հեռավար անցկացման ընթացքում ինձ բազմիցս օգնել են թվային և մեդիա կարողունակությանը տիրապետող աշակերտներս, ինչի շնորհիվ դասերը դարձել են տեղեկատվական, տեխնոլոգիական, մեթոդական, կահավորվածության իմաստով ավելի հագեցած և, եթե բոլոր աշակերտները հավասարապես ապահովված լինեին տեխնիկական ռեսուրսներով, դասերը, որոնց ժամանակ ապահովվում էր ուսուցչի և աշակերտի գրեթե հավասար գործընկերությունը, գործնական համագործակցությունը, որի ընթացքում թե՛ աշակերտը և թե՛ ուսուցիչը ունեին լավագույնս ինքնադրսևորման հնարավորություն, կստացվեին ավելի արդյունավետ, շահագրգռող: Այդ շրջանում, երբ դասարանները հաճախում էին դպրոց խմբերի բաժանված, հատկապես ավագ դպրոցի աշակերտներին ինքնաճանաչողական գործունեության, ինքնակազմակերպման և ինքնադրսևորման, սովորել սովորելու կարողունակության զարգացման հնարավորություն ընձեռեց նաև հանձնարարվող ինքնուրույն և գործնական աշխատանքների կատարումը: Աշխատելով աշխարհագրության դասագրքով, որպես մոդուլով, օրինակ 10-րդ դասարանում, յուրաքանչյուր աշակերտ կարող է ինքն իր համար գիտակցաբար ընտրել նյութի յուրացման այն մակարդակը, որը համապատասխանում է իր պահանջներին և կյանքում իր հետագա պլաններին: Ուսուցիչը վերահսկում է աշակերտի աշխատանքը: Սրան արտերկրում անվանում են նաև բլոկ – մոդուլային տեխնոլոգիա: Աշխատանքի այս ոճը ընդհուպ մոտեցրեց դպրոցը ԲՈՒՀ-ին, որտեղ ուսուցման գործընթացում զգալի տեղ է հատկացվում ուսանողի ինքնուրույն և համակարգված աշխատանքին:

Առարկայի նկատմամբ ճանաչողական հետաքրքրության մեծացմանը հատկապես 5-9-րդ դասարաններում նպաստում է դասի տարբեր փուլերում

(հատկապես ընկալման և կշռադատման փուլերում) խորանարդման կիրառումը, որը ես օգտագործում եմ որպես խաղային մեթոդ: Այս մեթոդի օգտագործումն առաջացնում է ընդհանուր աշխուժություն, մտցնում է թարմություն, երեխաների աչքերը փայլում են, մոտիվացնում է ցանկացած թեմայի ուսումնասիրությունը:

Ոչ ստանդարտ դասերն օգնում են լրացուցիչ հետաքրքրություն առաջացնել առարկայի, կոնկրետ թեմայի նկատմամբ, սովորողների մոտ զարգացնում են տրամաբանական և վերացական, վերլուծական մտածողությունը, ստեղծում են անբռնազբոսիկ մթնոլորտ, որը նպաստում է նյութի յուրացմանը:

Կարծում եմ , որ երեխաներին առավել դուր են գալիս փնտրող, ստեղծագործող ուսուցիչների դասերը: Մեր մասնագիտությունը տալիս է մշտապես որոնելու, ստեղծագործական մոտեցումներ դրսևորելու, մտքի թռիչքի հնարավորություն, ինքնաբավարարվածության զգացում, երբ տեսնում ես, որ աշակերտներին հետաքրքիր է այն, ինչ անում ես:

Աշխատանքային գործունեության ընթացքում եկել եմ այն եզրակացությանը, որ նորարարական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է աշակերտների գիտելիքների որակը, նպաստում նրանց ընդհանուր զարգացմանը, օգնում հաղթահարել տարաբնույթ, այդ թվում՝ հոգեբանական բնույթի դժվարություններ, ազդում է ամբողջ աշխատանքի բնույթի վրա, կատարելագործում է կիրառվող մեթոդներն ու միջոցները, նպաստում է ինքնակրթությանը:

# Եզրակացություն

Կրթական գործընթացը բարդ է և պատասխանատու: Եթե հասարակական կյանքի մյուս բնագավառներում կայացված որոշումների, կատարված փոփոխությունների, ծավալված աշխատանքի հետևանքները դրսևորվում են համեմատաբար արագ՝ կարճ ժամանակահատվածում, ապա կրթության, ուսուցման և ուսումնառության ոլորտում այդ ժամանակահատվածն ավելի տևական է:

Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման և կրթության նպատակներն իրականացնելու համար կարևոր է զուգորդել տարբեր՝ ավանդական և նորարարական մեթոդներ, հնարներ: Մեթոդների ընտրությունը կապված է այն նպատակների ու խնդիրների հետ, որոնց հետապնդում է ուսուցիչը: Ուսուցիչն իր աշխատանքի ընթացքում լուծում է աշակերտի ուսուցմանը, դաստիարակությանը, նրա անհատականության ձևավորմանն առնչվող հարցեր:

Այս աշխատանքում փորձեցի բացահայտել որոշ մեթոդներ, հնարներ, որոնք կիրառել եմ ինքս դասերս ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու, աշխարհագրությունն աշակերտներին ավելի սիրելի, ընկալելի և կիրառելի մատուցելու, առարկայի հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Աշխատանքիս մեջ ներկայացվեց նախագծային աշխատանքի էությունը և ուսուցչի կողմից դրա կազմակերպման և իրականացման համար սովորողների համատեղ գործունեության մոտիվացման ուղիների ձևավորումը, աշխարհագրության դասերին մեթոդի կիրառման հնարավոր ուղիները, իմ աշխատանքային փորձից ներկայացվեցին մեթոդներ, որոնք նպաստել են աշխարհագրության դասավանդման և ուսումնասիրության ընթացքում ամենատարբեր ընդունակություններ, խառնվածք և բնավորություն, տարբեր հետաքրքրություններ ունեցող սովորողների ակտիվության բարձրացմանը, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանը, նրանց մղել ինքնուրույնության, նպաստել, որ այդ աշակերտները չխուսափեն նախաձեռնություն դրսևորելուց:

Այսպիսով ուսուցման ավանդական մեթոդներին զուգահեռ նորարարական մեթոդների շարունակական կիրառմամբ իրականացվում է ուսուցման տեղեկատվական մոդելից անցումը տեղեկույթի կիրառության, հմտության ու

կարողության դրսևորման, վերաբերմունքի զարգացման ու դրսևորման մոդելին, սերտելու և մտապահելու դպրոցից՝ մտքի և գործողությունների դպրոցին, որը նպաստում է դպրոցական աշխարհագրության կարևորության ընկալման նկատմամբ նոր մոտեցումների ձևավորմանը, քաղաքացու և անհատի կերտմանը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Дронов В.П. География. Рабочие программы. Предметная линия учебников «Сфера». 5-9 классы: пособие ля учителей общеобразовательных учреждений / В.П. Дронов, Л.Е. Савельева. – М.: Просвещение 2011. - 176 с.
2. Душина И. В., Таможняя Е.А., Путятин В.Б. Методика и технология обучения географии: Пособие для учителей и студентов пед. институтов и университетов. – М.: ООО «Издательство Астрель»: ООО «Издательство АСТ», 2002. – 203с.
3. https://maminsite.ru/school.files/school_projectwork.html july 20, 2022